առաքեալ յամենայն յեկեղեցիս, Մի քանի բանսարկու չարք կաթողիկոսին թուղթն առաքեալ և նա ոչ գիտելով մէկ քանի թուղթ է ղրկեր՝ զոմն աւրհնութեան և զորն մեղադրական. մարդ ուղարկեցաք առ Հոգևորտէրն, զի դատաստանի մեծի կարօտացաւ: Եւ օրս զնշանն օրհնեցաք ի յեկեղեցին Մայրամի Շաբաթին: Բարեկենդան է Յիսնակի:

Բշի օրս (17 Նոյ.) գնացեալ Զուղեցոց մեծամեծացն առ Աստուածատուր վարդապետն և ասացեալ թէ ՉՏէր Մարտիրոսն և զՅարութիւնն դուք գիտէք, բայց տալ պիտիս զբանադրանք Ղազար հաբեղին. և այլ բազում ազերսմամբ առնեն ի ձեռաց և երեկոյիս կարդալ տան ի Սուրբ Նիկողոս:

Գշիս (18 Նոյ.) օլօֆէն ելեալ, և երեր էլչին զընծայս առ թագաւորն՝ ուղտ ԽԵ, փիղ մի և թուր մի և մի աղեղ, ՃԾ մսխալ մարգարիտ, Ծ մսխալ մոմեայի քեանի և մէկ քանի խալիչա ապրշմեղէն և այլ աթլասք և կերպասք, և խնդրեալ զՊաղտատայ կեօռխանէ իմամոցն. և թագաւորն ասացեալ թէ Գրաւ տվէք ինձ, զի ոչ հաւատամ ձեզ թէ նստիք խաղաղ. և դեսպանն ասացեալ թէ Ի՞նչ գրաւ ուզես. և թագաւորն ասացեալ թէ Զդուստար և զորդի Շահին ձեր. և նա լուռ լեալ ի դուրս հանեցին:

Եւ առաւօտուս Գշի սկսեալ Ղազար վարդապետն ի դաս քաշել զնոսա՝ մեծամեծաց մինչև ի փոքունս, զոր ինչ գիտէր, և յամէն առաւօտու ասէր զժամն և տայր քարոզ և ի դաս քաշէր զԱրևելցիքն և աստ եղեալ զչարսն զամենեսեան:

Ուրբաթի օրս (21 Նոյ.) թագաւորն դուրս ելեալ ինամազ բազում ամբոխիւ մեծամեծօք և փոքրով[1]), որպէս սովորն էր: Եւ օրս զտէֆտէրտարն փոխեցին

1) փոքով.